ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այգեստան համայնք, Շահումյան փ.16, հեռ. 0235 6 00 41, էլ. փոստ araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 24 » դեկտեմբերի 2012 թվականի **N 12**

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2012Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

(զեկ. Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 29 կետով

Ավագանին որոշեց՝ հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող միջոցների 2012թ. գույքագրման արդյունքների վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի կողմից կազմված ակտերը:

Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՈՒՇ	-	-
ԹԱՄՐԱԶՅԱՆ ԼԻԼԻԹ	-	-
ԹԵԼԼԻՅԱՆ ԿԱՐՈ	-	-
ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ	-	-
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՍՈՒՐԻԿ	-	-
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՕՆԻԿ	-	-

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այգեստան համայնք, Շահումյան փ.16, հեռ. 0235 6 00 41, էլ. փոստ araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 24 » դեկտեմբերի 2012 թվականի **N 13**

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

(զեկ. Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով,

Ավագանին որոշեց՝ Այգեստան համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

Հիմնական օբյեկտների համար

ա/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բ/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝20000 դրամ,

501-ից 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ,

դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 4000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացնող աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝2000 դրամ,

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների շինարարության կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի

նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Շենքեր, շինություններ, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 5000 դրամ:

/1;2;3 կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ/:

4. Համայնքի տարածքում՝

1/ Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել տեղական տուրք 3000 դրամ:

3/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,

4/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ:

5/ յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանել տեղական տուրք

ա/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ,

բ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ:

6/ մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույտվության համար ընթացիկ տարվա համար սահմանել տեղական տուրք 10000 դրամ:

<u>Տեղական վճարների դրույքաչափերի սահմանում</u>

ա/ շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ,

բ/ գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար՝ 2000 դրամ,

գ/ մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 500 դրամ:

Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՈՒՇ	-	-
ԹԱՄՐԱԶՅԱՆ ԼԻԼԻԹ	-	-
ԹԵԼԼԻՅԱՆ ԿԱՐՈ	-	-
ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ		-
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՍՈՒՐԻԿ		-
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՕՆԻԿ		-

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ